ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----»----------2016թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32–րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշումը `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ «ԿԱՐԿՈՄԱՎՏՈ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Շահումյան-2 գերեզմանատներ տանող ճանապարհի վրա, տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող 20000.0 քմ մակերեսով հողամասից 9700.0 քմ մակերեսով հատվածը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 06.02.2003թ հ.1635975 վկայական) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող հարակից տարածքում և տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող 9700.0 քմ մակերեսով համարժեք հողամասի հետ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է «ԿԱՐԿՈՄԱՎՏՈ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Շահումյան-2 գերեզմանատներ տանող ճանապարհի վրա, տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող 20000.0 քմ մակերեսով հողամասից 9700.0քմ մակերեսով հատվածը (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 06.02.2003թ հ.1635975 վկայական) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող հարակից տարածքում և տարածագնահատման 8-րդ գոտում գտնվող 9700.0 քմ մակերեսով համարժեք հողամասի հետ:

Հողամասերի փոխանակությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «ԿԱՐԿՈՄԱՎՏՈ» ՍՊԸ-ին պատկանող 20000.0 քմ մակերեսով հողամասից 9700.0 քմ հատվածը ներառվել է «Երևանի արևմտյան շրջանային նախագծային ճանապարհ»-ի՝ Ա.Բաբաջանյան-Աշտարակ նոր ավտոճանապարհի համար առանձնացված հողամասի սահմաններում:

Հաշվի առնելով հողամասի տեղակայման վայրի առանձնահատկությունը, սեփականատիրոջ հետ բանակցությունների արդյունքում, նպատակահարմար է գտնվել իրականացնել հողամասերի փոխանակում, ինչի պարագայում ինչպես Երևան համայնքի, այնպես էլ ընկերության համար հնարավորություն կառաջանա հողամասն արդյունավետ օգտագործել, ինչպես նաև ապահովել տարածքի առավել կանոնակարգված քաղաքաշինական իրավիճակ:

Փոխանակվող հողամասերը ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում են Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 8-րդ գոտում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել կայացնելու ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ